— Ի՞նչ առանձին շահեր պէտք է ունենան, — հարցրի ես:

— Քեռի Պետրոսը մի երեւելի քուրդ իշխանի տան «շահբանդան» է. նա մատակարարում է բոլոր պիտոյքները, ինչ որ կը հարկաւորոի նրա տունը: Նա այնպիսի ընդարձակ իրաւունքներ ունի իշխանի տնտեսութեան մէջ, որ առանց նրա հաճութիւնը ստանալու, առանց նրանից հարցնելու, կատարում է բոլոր խնդիրները, բոլոր ապսպրանքները՝ ինչ որ տանեցիք պահանջում են իրանից: Սկսած ուտելեղէններից, հագուստից, մինչեւ ամենամանր բաները նա է տալիս: Վաճառականութիւնից անտեղեակ քրդի հետ ցանկալի է այսպիսի առեւտուր ունենալ: «շահբանդան» ինքն է գնահատում, ինքն է գրում իր տետրակների մէջ իր տոածը, եւ տարեգլխին յայտնում է մի ահագին գումարի պահանջ: Միամիտ քուրդն ընդունում է, բայց նա փող չունի, որ պարտքը հատուցանէ, բացի դրանից, նա զուտ արծաթով պարտք վճարելու սովորութիւն չունի: Նա իր ստացած նիւթը փոխարինում է ուրիշ նիւթով: Այս վերջինը նա ունի: Բաւական է միայն, որ իշխանը բարեհաճէր մի արշաւանք գործել դէպի երկրի որեւիցէ կողմը, եւ ահա նա վերադառնում է ոչխարների, ձիերի, կովերի, գորգերի ու կապերտների ահագին աւարով: Մի մարդ պէտք է, մի վաճառականութեան գլուխ ունեցող մարդ, որ այս մթերքը տանէ եւ մի հեռու երկրում արծաթի հետ փոխէ: Եւ ահա քեռի Պետրոսը պատրաստ է. նա ամէն տեղ ունէ իր գործակալները գողացած ապրանքը «սաղացնելու» համար: Նա իշխանից արծաթի պահանջ ունի եւ փոխարէնը ստանում է այդ աւարը: Իսկ գողացած ապրանքը միշտ էժան է լինում...

— Քեռի Պետրոսները, — շարունակեց նա, — մի տեսակ աւազակներ են, միայն վաճառականի կերպարանքով: Ամէն մի քուրդ իշխան ունի դրանցից մի-մի հատ: Քեռի Պետրոսներին ցանկալի է, որ իրանց իշխանը միշտ հաստատուն մնար իր անսահման իշխանութեան մէջ, թէեւ նրանք գիտեն, որ իրանց ստացած մթերքը յափշտակոած է հազարաւոր թշոառ հայերից: Բայց փոյթ չէ նրանց հայի արտասուքը, բաւական է, որ իրանք շահւում են...

Ասլանը խօսում էր մեղմ եւ անվրդով կերպով, որպէս թէ շատ հասարակ առարկայի վրայ լինէր նրա խօսքը: Բայց նա խօսում էր առանց լռելու, որովհետեւ նրա սիրտը լցոած էր: Այդ ժամանակ ես չէի կարողանում առանց սարսափելու նայել Մարօի երեսին. նրա շրթունքները դողում էին, գոյնը ստեպ ստեպ փոփոխւում էր, եւ երեսի բոլոր արտասանութեան մէջ երեւում էր խիստ կատաղի բարկութիւնը:

— Պէտք է ոչնչացնել այս բոլոր քեռի Պետրոսներին, — ասաց նա երկար լռութիւնից յետոյ: